

Հայաստան

2021 թ. հունիսի 30

Փախստականների հարցով գլոբալ

համաձայնագրի ներքո ՄԱԿ ՓԳՀ-ն աջակցում է ՀՀ կառավարությանը փախստականների պաշտպանության մեխանիզմների, ապաքաղաքացիությանը վերաբերող քաղաքականությունների բարելավման եւ ընթացիկ համապետական բարեփոխումներում փախստականների ներգրավման գործում:

Լեռնային Ղարաբաղ (ԼՂ). ՄԱԿ-ի

մշտական համակարգողի գրասենյակի հետ համատեղ՝ ՄԱԿ ՓԳՀ-ն տրամադրում է մարդասիրական օգնություն **փախստականների իրավիճակում գտնվող անձանց**, որոնք տեղահանվել են Լեռնային Ղարաբաղից եւ բնակվում են Հայաստանի տարբեր հատվածներում:

Միջգործակալական արձագանքում.

ՄԱԿ-ի մշտական համակարգողի եւ ՄԱԿ ՓԳՀ-ի համատեղ ղեկավարությամբ՝ Հայաստանում ՄԱԿ-ի թիմը մշակել է **Հայաստանի միջգործակալական արձագանքման ծրագիր** եւ 2021 թ. հունվարի 28-ին այն ներկայացրել կառավարությանը:

ՄՏԱՀՈԳՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ ԳՏԿՎՈՂ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Փախստականներ	3401
Ապաստան հայցողներ	144
Փախստականի իրավիճակում գտնվող անձինք*	42023
Քաղաքացիություն չունեցող անձինք	892
Ընդամենը	46460

* Ներառյալ Սիրիայից եւ ԼՂ-ից ժամանակ փախստականի իրավիճակում գտնվող անձինք:

ՇԱԿԱՆ ԵՐԵԸ ԽՈՇՈՐԱԳՈՒՅՆ ԵՐԿՐԵՐ

Փախստականներ	Ապաստան հայցողներ
Ադրբեջան 1,212	Իրան 38
Իրաք 1,092	Սիրիա 20
Սիրիա 744	Իրաք 9

Տվյալների աղբյուր. ՀՀ կառավարություն

COVID-19-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ ԵՎ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ

Շահերի պաշտպանություն. ՄԱԿ ՓԳՀ-ն, ԱՀԿ-ի եւ ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ համատեղ, շատագույնով է պատվաստման ազգային ծրագրում մտահոգության ներքո գտնվող անձանց ներառման համար: 2021 թ. հունիսի 30-ի դրությամբ մտահոգության ներքո գտնվող շուրջ 40 անձ ՄԱԿ ՓԳՀ-ի ուղղորդմամբ պատվաստում են ստացել:

Հաղորդակցություն համայնքների հետ. Իյուրընկալող համայնքների եւ մտահոգության ներքո գտնվող անձանց հետ ՄԱԿ ՓԳՀ-ի համագործակցությունը շարունակվում է կանոնավոր դաշտային այցերի եւ թեժ գծի ծառայություն մատուցելու, ՄԱԿ ՓԳՀ Հայաստանի գրասենյակի ֆեյսբուքյան էջի, «Տեղեկատվություն Հայաստանի փախստականներին» տվեգրամային ալիքի, ինչպես նաեւ ՄԱԿ ՓԳՀ Հայաստանի «Help» վեբկայքի միջոցով:

Կանխարգելում. ՄԱԿ ՓԳՀ-ն եւ գործընկերները տարածում են COVID-19-ի կանխարգելման վերաբերյալ ԱՀԿ տեղեկատվական թերթիկները եւ պաստառները, համայնքապետարաններին եւ ժամանակավոր կացարաններում բնակվող անձանց բաժանում դիմակներ եւ այլ պաշտպանիչ պարագաներ: Մտահոգության ներքո գտնվող 736 անձ դրամական օգնություն է ստացել COVID-19-ի համատեքստում իրենց հիմնական կարիքները բավարարելու համար:

Շեշտադրումներ

Պաշտպանության մշտադիտարկում

Հաշվետու ժամանակահատվածում հարցազրույց է անցկացվել 1,907 մարդու հետ, որոնցից 50 տոկոսը՝ կին: Վերջերս հրապարակված **Պաշտպանության մշտադիտարկման զեկույցը** ներառում է տվյալներ պաշտպանության հետ կապված ռիսկերի եւ մարտահրավերների մասին, որոնց բախվում են մտահոգության ներքո գտնվող անձինք:

Դրամական աջակցություն

Փոխըմբռնման հուշագիր է ստորագրվել Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության եւ ՄԱԿ ՓԳՀ-ի ու գործընկեր ՀԿ-ների միջեւ՝ փախստականի իրավիճակում գտնվող անձանց դրամական օգնություն տրամադրելու վերաբերյալ:

Խաղաղ գոյակցության ծրագրեր

Եւ համայնքային աջակցության նախաձեռնություններ են մեկնարկել Հայաստանի տարածքում: Տեխնիկական օժանդակություն է տրամադրվել **երկու համայնքապետարանի եւ հինգ համայնքային կազմակերպության:**



ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակի անձնակազմն օգնություն է բաշխում:

Այցելեք ՄԱԿ ՓԳՀ Հայաստանի գրասենյակի վեբկայք էջը՝ [ավելի մանրամասն ծանոթանալու համար:](#)

Առանցքային գերակայություններ

- **Պաշտպանություն.** Պաշտպանության մշտադիտարկման միջոցառումների հետ միասին՝ ՄԱԿ ՓԳՀ գրասենյակն աջակցում է կառավարությանը՝ բարելավելու ընդունման պայմանները եւ բավարարելու մտահոգության ներքո գտնվող առավել խոցելի անձանց հիմնական կարիքները, մշտադիտարկում է ընդունման հաստատությունները եւ տրամադրում անհատական իրավաբանական, հոգեբանական, բժշկական եւ սոցիալական աջակցություն հատուկ կարիքներ ունեցող անձանց: ԼՂ-ից տեղահանված շուրջ 1,095 անձ պաշտպանության մշտադիտարկման միջոցով ուղղորդվել է՝ ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից ոչ պարենային աջակցություն ստանալու համար:
- **Տարածքի հասանելիություն.** ՄԱԿ ՓԳՀ-ն կանոնավոր կերպով մշտադիտարկում է մուտք գործելու անցակետերը՝ ապահովելու ապաստան հայցողների անարգել մուտքը ՀՀ տարածք, աջակցում է ազգային հզորությունների զարգացմանը եւ օժանդակում սահմանապահների ու անցակետերի աշխատակիցների համար փախստականների իրավունքի դասընթացներին ինստիտուցիոնալ կարգավիճակ տալուն:
- **Ապաստանի ընթացակարգեր.** ՄԱԿ ՓԳՀ-ն, «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի հետ համատեղ, իրականացնում է ապաստանի տրամադրման վարչական եւ դատարարական ընթացակարգերի մշտադիտարկում, աջակցում կառավարությանը՝ ապաստանի ընթացակարգերի որակն ու արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:
- **Համայնքների հզորացում եւ ինքնապայմանում.** ՄԱԿ ՓԳՀ-ն իր մտահոգության ներքո գտնվող անձանց տրամադրում է նպատակային օժանդակություն՝ նպաստելու Հայաստանում նրանց ինտեգրմանը: Սոցիալ - հոգեբանական, իրավաբանական եւ բժշկական աջակցությանը զուգահեռ՝ փախստականներն օգտվում են նաեւ մասնագիտական վերապատրաստման, լեզուների ուսուցման դասընթացներից, ինչպես նաեւ կենսապայմանների բարելավման ու եկամուտների ստեղծման ծրագրերից: Համագործակցելով «MADE51»-ի հետ՝ տեղահանված կին ձեռներեցները զբաղվում են ավանդական արհեստագործությամբ, հուշանվերների եւ դիմակների արտադրությամբ:

Աշխատանք գործունեությունների հետ

- ՄԱԿ ՓԳՀ-ն համագործակցում է պետական եւ ոչ պետական շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ Միգրացիոն ծառայության, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի, Հանրային պաշտպանի գրասենյակի, ճյուղային նախարարությունների եւ դատական համակարգի, Խորհրդարանի, Ոստիկանության, մարզպետարանների եւ համայնքապետարանների, քաղիասարակության, գանգվածային լրատվամիջոցների եւ ակադեմիական շրջանակների հետ:
- **Արտաքին հարաբերություններ եւ հաղորդակցություն համայնքների հետ.** Հիմնական գործողությունները ներառում են մտահոգության ներքո գտնվող անձանց ծանր վիճակի եւ նրանց առջև ծառայած մարտահրավերների վերաբերյալ հանրային իրազեկության մակարդակի բարձրացումը,

նրանց կրթումը սեփական իրավունքների եւ պարտականությունների վերաբերյալ՝ Փախստականների մասին գլոբալ համաձայնագրի ոգուն համահունչ, ներառյալ՝ նոր գործարկված ՄԱԿ ՓԳՀ «HELP Հայաստան» վեբկայքի միջոցով:

Արձագանքում Լեռնային Ղարաբաղի ճգնաժամին

- 2021 թվականի մայիսի դրությամբ՝ Հայաստանում **փախստականի իրավիճակում գտնվող անձանց** թիվը կազմել է **36,989**: Նրանց գերակշիռ մեծամասնությունը կանայք եւ երեխաներ են:
- ՄԱԿ-ի մշտական համակարգողի գրասենյակի հետ համատեղ՝ ՄԱԿ ՓԳՀ-ն ղեկավարում է 2020 թ. սեպտեմբերին բռնկված զինված հակամարտության հետեւանցով ԼՂ-ից տեղահանված անձանց մարդասիրական կարիքներին արձագանքման գործողությունների **համակարգման մեխանիզմները**:
- ՄԱԿ ՓԳՀ-ն սերտորեն ներգրավված է **պաշտպանության մշտադիտարկման** գործողություններում (ներառյալ՝ մեկնելու եւ վերադարձի մշտադիտարկումը), որպեսզի արդյունավետորեն որոշարկի եւ արձագանքի Հայաստանի տարածքում գտնվող տեղահանված անձանց խոցելի խմբերի պաշտպանության կարիքներին:
- Հաշվետու ժամանակահատվածում ԼՂ-ից փախստականի իրավիճակում գտնվող մոտ 1,285 մարդու բնաիրային աջակցություն է տրամադրվել հիմնական կարիքները հոգալու համար:


Ապաքաղաքացիություն

- Հայաստանը միացել է ապաքաղաքացիության մասին 1954 եւ 1961 թվականի կոնվենցիաներին: Ապաքաղաքացիությանը վերջ դնելուն ուղղված #IBELONG քարոզարշավի խթանման նպատակով ՄԱԿ ՓԳՀ-ն աջակցում է կառավարության ջանքերին՝ ուղղված ապաքաղաքացիությանն առնչվող իրավական քաղաքականությունների եւ ընթացակարգերի ընդունմանը:
- ՄԱԿ ՓԳՀ-ն աջակցում է քաղաքացիություն չունեցող անձանց համար 1954 թ. Կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթերի ներդրմանը, ինչը համահունչ է Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության չափանիշներին:

ՄԱԿ ՓԳՀ-ի ներկայությունը Հայաստանում

Անձնակազմ	Գրասենյակներ
32 տեղացի աշխատակից	1 գրասենյակ Երեւանում
10 միջազգային աշխատակից	

Ֆինանսական տեղեկություններ (առ 2021 թ. հուլիս)



ՄԱԿ ՓԳՀ-ն շնորհակալություն է հայտնում խոշոր դոնոր կառույցներին՝ 2021 թ. գլոբալ ծրագրերին առանց նախապայմանների հատկացված միջոցների համար, որոնց շնորհիվ ՄԱԿ ՓԳՀ-ն հնարավորություն է ստանում ճկուն կերպով օժանդակելու մտահոգության ներքո գտնվող՝ ծայրահեղ կարիքավոր եւ վտանգված բնակչությանը: 10 մլն ԱՄՆ դոլար կամ ավելի նվիրաբերած դոնորները.

Նորվեգիա | Շվեդիա | մասնավոր դոնորներ՝ Իսպանիա | Նիդեռլանդներ | Դանիա | Գերմանիա | Ֆրանսիա | մասնավոր դոնորներ՝ Կորեայի Հանրապետություն | Շվեյցարիա | մասնավոր դոնորներ՝ Ճապոնիա | Իռլանդիա | Բելգիա:

ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակը երախտապարտ է նաեւ 2021 թ. ընթացքում հետեւյալ դոնորներից ստացված նվիրատվությունների համար (հուլիսի 2-ի դրությամբ).

Հայաստան | Եվրոպական միություն (ECHO) | Ճապոնիա | Ռուսաստանի Դաշնություն | Ամերիկայի Միացյալ Նահանգներ | ՄԱԿ CERF | GAP Inc. | UPS Corporate